

ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յէջ 375)

Ակասա առնելով Բնիկ-Արիաստանի երկրորդ ծանօթապայն գաղութն՝ որ է Քաղցկաստան՝ 'ի սկզբան անդ կը տեսնեմք մայրաքաղաքն Ուր (քաղաք սեմական լեզուի, և հոր արիական) զարգացեալ մեծապէս և նման շատ բաներու մէջ Տիւրսենեան գաղութին. — « L'Euphrate va hériter des splendeurs du Nil »... Ըսել է Արիականաց յիշպատու գաղթելն և անտի կրիլն զարձն ՚ի նախնական Բնիկ-խանձարուրա, ՚ի Հայս : — « Les flottes égyptiennes qui sillonnaient la mer Rouge n'existent plus ; Les Arabes du Yemen, ayant reformé leurs caravanes, bénéficient d'un trafic que les Chaldéens vont exploiter ». (M. Fontane, Les Asiat. p. 66). Սակայն քիչ մ'ալ շարունակեմք, աւելի հետաքրքրական են հետևեալքն. « La recherche de l'é-tain indispensable aux fondeurs de l'Egypte et de la Babylonie, fut le premier stimulant de la navigation lointaine des sidoniens. A l'époque des « Pasteurs » les Chaldéens avaient le monopole de ce trafic ; or les sidoniens n'étaient que des émigrants de Chaldée. Ils allèrent d'abord vers le Pont-Euxin, avec leurs « nefes creuses » et Sidon fut la « ville riche en airain ». (Անդ) : —

Աւելորդ և ստուգիւ աւելորդ է երկարելն մոգութեան՝ հմայութեան, զիւթութեան, աստեղաբաշխութեան և աստեղագիտութեան վրայ. Տիւր զից վրայ խօսած ժամանակ պիտի տեսնեմք թէ 'ի Հայս « քրմական զիտութիւնն » այսինքն է աստեղագիտութիւնն՝ առանձին Դպրոցներ ուներ. առանձին Դպրութիւն մ'էր այդ. Անի ամրոցին մէջ պիտի տեսնեմք « Աղջային և մեհենական մատենակարան մը ճոփի և սպանչելի. որ Հայ թագաւորաց և ազգին և կրօնից մատեանք և պաշտօնական զիրք կը պահուէին. և որ զեգերած են մի քանի անձինք. այսպիսի մատենակարանք և հոյակապ վարժոցներ անտարակոյս կրօնապետաց հակողութեան ներքոյ զրուած՝ կը ծաղկէին 'ի Հայս: Հասն զի խորենացի կը յիշասակէ « իւրաքանչիւր տանց և առանձնականութեանց պատմութիւնք » կային. ո՞ւր են այդոքիկ: Այսպէս համ և նման քաղցկասան զաղութին կը տեսնեմք լինել: Լսեմք Gerenius (Comm. T. II. p. 327: S. Munk. Palest. p. 433). « Cette Chaldeé primitive avait déjà des bibliothèques où se conservaient des « livres sacrés », des « écoles sacerdotales » où s'enseignaient les « formules magiques, où se récitaient les « incantations », où

se chantaient des « hymnes » qui nous promettent, un jour, la découverte des plus anciens et des plus curieux des Védas ». Ցես ասս խորենացոյ Պամ. Հայ. Գիրք Ա. Ա. Ա. և բաղդատէ : Ժողովեմք բաղդէական այդ սրբազն մասցորդըն, ժողովեմք Գողթան Մ'ուսայից պարն, Քող երգեն, թող ներզանակեն. և ահա հայկական գրանչելի վերպայքն կը պարզուին համայն աշխարհ սրանցացունելով : « Les œuvres d'astronomie, d'astrologie et de divination des « Vieux Chaldéens » étaient bien connues des Assyriens de la période historique. — L'Empire Chaldéen qui venait de disparaître, ferme le cycle historique de l'an 4000 à l'an 1500 avant notre ère, avait eu sa civilisation propre, très importante, car les civilisations postérieures, en Babylonie comme en Ninjve, ne seront guère qu'une suite de la vie chaldéenne, avec moins d'originalité » . (Անդ) : —

Այդ « սրբազն գրեանն », այդ « դպրաց պիւանք », այդ « համայական բանց », այդ « երգք և շարականց ո յորոց կը յուսայ Հնախօսութիւնն նոր վերաներ և նոր Աւետառաներ օր մը տեսնել, հնազոյն և շահեկան քան զոր այժմ ունիմք 'ի ձեռին, միթէ պիսի շտան մեծ լոյս և մեր տափարկած խնդրոյն, և մանաւանդ թէ հաստատոթիւն : Այդ հնազոյն վերպայք և Աւետառայք սրոց անձկութեամք ակնկալեմք՝ ժամիմ ես յուսալ թէ 'ի մէնջ 'ի Բնիկ-Արիաստանէ պիսի ծագին, ինչպէս երրեմն և նախկին գաղովթք : — Որ ինչ յետ այսորիկ քննութիւնք բաւական փաստ են մեր այս յուսոյն յաշողապէս հաստատոթեանն :

Հետաքրքական է հասխօսից հետևեալ կրկին հարցումն .

Ա. Իրանեանց նախկին բնակլայրն ուր էր . — Բ. Աւատի՞ գաղթեցին 'ի Պարս .

Մազկեզանց մատեանն կը պատմէ « Աստուծասուր » (Vendidad) զրոց մէջ . — Ուրմիզդ իւր հօսին բարեկեցութեան փափարօզ է . իսկ Արհմէ կը նեղէ զնոսա : Ուրմիզդ կը զատէ իւր ժողովլուրդն « Նախկին երկրէն », կ'առաջնորդէ 'ի « Նոր ասհմանեալ բնակութիւնն », տասն և վեց կայք անցնելէ յետոյ : — Առաջին բնակութիւնն — « Դրախտանանն » — էր կ'ըսէ . (semblant au paradis) : (Ցես Anquetil du Perron, Avesta). — Սակայն Արհմէ անսանելի ցուրտ կը ձգէ անդ, և կ'ըստիպին Երինեանք (Eerienéens, Eirénieurs Jréneéns, Jraniens) թողով « Երանասէտա աշխարհն » « Երինաստանն » — Eerien-Vaedjo — (Արիաստան), և պաղթել : Ցասն և վեց անգամ կը զետեղին, քաղաք կը շինեն, բնակարան կը հաստատեն, տասնեւլից անգամն ալ սոսկալի հալածանոք կը փութան գաղթել և երթալ հանգիստ՝ բնակութիւն և զադար խնդրել : Արհմէ, կը նեղէ զնոսա անտանելի ցրտով, վասակար կենացանեօք, նիւթական և բարյական ծանր պատուհասներով : —

Այդ տասնեւլից կայքն քննել, քաղաքներն հաստատել գաղութին մեկնման տեղն կանելն է: « La première opinion nettement formulée fut que le premier lieu, le point de départ, Eeriene-Vaedjo, était en Arménie. (8^e C. A. Moreau de Jonnes, Les temps myth. p. 402): »

Anquetil ի ցուցած զնացքով՝ Երանաւէտ աշխարհէն գաղթելով՝ Որմիոյ լճին եղերքն Ա. կայքն կը հաստատեն. կասպից ծովոն հարաւէն՝ Պորճ և Զաղրս լերանց վրայէն կասպից արեւելքն կ'անցնին, և Աքսոս գետոյն հիւսն Բ. կայքն կը զնեն. կ'իշնեն զէպ յարեւմտեան հարաւ Գ. կայք. զէպ արեւելք Ոքսոս գետն կտրելով Գ. կայք. գարձեալ արեւմտեան հարաւ կը շարժին Ե. անտի ուղղակի հարաւ՝ Զ. զէպ արեւելք ինդոս զետն անցնելով կրկին տեղեր է և Ը. կրկին զարձ Սուլիման լերանց վրայէն 'ի մուսա' Թ. 'ի հարաւ Ժ. զէպ 'ի մուսս յառաջելով Ժ. յարեւմտեան հիւսիս՝ Ժ. յելս՝ Ժ. յարեւմտսս քալելով 'ի հիւսիս Պորճ լերանց վրայ՝ Կասպից արեւմտեան հարաւն՝ Ժ. կրկին զէպ 'ի Հնդիկս, ինդոսն անցնելով Ժ. անտի զէպ 'ի Զաղրսս, Տիգրիսի հովակին մօտ, Ժ. — Խոկ F. Lenormant « Դրախտանան երկրէն ո ենելէն յետոյ առաջին կայքն 'ի Պամիր կը ցուցընէ. և վերջինն Աքսոս գետին և Հնդիկ-կաւկասի միջալայրն:

Կը յաելու M. Fontane. « Le système le plus récent ne donne le nom d'Iraniens aux émigrants qu'au moment de l'Exode; il les nomme Aryas tant qu'ils sont en Eereine-Veedjo. Il y aurait eu un peuple Arya primitif, parlant une langue originelle, — la langue dite indo-européenne-mère: — et qui se séparant un jour, se divisa en trois grandes masses humaines, dont l'une s'en fut en Indoustan, l'autre en Europe, la troisième en Iran.... այսպին նպաստաւոր է մեզ, բայց վերջաբանութիւնն հակառակ C. A. Moreau de Jonnesի կարծեաց և մեր համոզման՝ F. Lenormant ի հետ կը զուգի, և 'ի Պամիր կը զնէ « Երանական Դրախտէն » մեկնելով՝ իրանեան գաղութի առաջին կայքն:

Մակայն այսու մեր փաստքն շեն տկարանար, և այս ոչ միայն հակառակ չէ մեր պատճառաբանութեանց նպաստակին՝ այլ և փաստ մ'է աւելի մեր ցուցման հասանառութեան. թէ այդ « Երանաւէտ Դրախտանան » կերպանն՝ Eerieene-Veedjoն՝ Արեաց կերպոնալայրն՝ ուսկից ճառագայթեցին բիրաւոր Արեաց գաղութք Հնդկուպական գոտույն, և ուսաի մայր լեզուն տարածեցաւ, ու քաղաքականութեանց և զիտութեանց լցոն սիրեցաւ՝ և Արիական Երանական Աշխարհն, Բնիկ-Արիաստանն, ՀԱՅՈՑ ԲՆԱՎԱՐԱՐՆ: (Eerieene-Vaedjo):

Եւ արդէն խոկ պատճական արձանագրութիւնք կրկին իրաներ կը յիշաւակին: իրան բակարիական, կասպից ծովոն արեւելեան-կողմն, և հայկական իրան՝ նոյն ծովուն արեւմտսքն, զոր Jran géorgien կը կոչեն ու

մանք: — De nombreux arguments ont été émis en faveur de l'Eeriene-Vaedjo géorgien, l'Aderbeidjan actuel. (M. Fontane, les Jran. p. 82). **Այդ Արքաստականն ընդ մեզ շատերն Էրիեն-Վայդյօի ամենափոքրիկ մի քաւան կը համարին . և այդ Երանական Դրախտն Յ. A. Moreau de Jonnesի հետ պարզ բառով Արմénie Կ'անուանեն : Ստրաբոնի խօսքով այս երկրիս մէջ պարած են կասպական ժողովրդն , (կասպիք) ⁽¹⁾:**

Ըստ Anquetil du Perronի վերայիշեալ ուղեցոցին՝ Արիական գաղոթն՝ ընդարձակ սահմանաւ Հայկական կասպէն հեռանալով՝ « Դրախտանման երկրէն », Մասեաց սուբէն, Արարատ գաւառէն, Արեաց կեղոնէն, առաջին կայքն Որմից լճին եղերքն կը հաստատեն . կասպից ծովուն հարաւակ կը շրջին, և դէպ ՚ի հիւսիսային արեւելք կ'ուղղին . կ'անցնին Տուրաննեակ աշխարհն , կարելով Որսոս գետն մինչ Սովորան կը յառաջեն . Սմրզանոի հարաւէն Կ'իշնեն ՚ի Խորասան . անտի միսանագամ Որսոսի արեւելքն կը դիմեն, կը գառնան դէպ յարեւմուս և կապուիք հովտաց մէջէն կ'եւեն ՚ի Հնդիկ-կասկաս . ՚ի Հնդիկս կը մտնեն, ինտոս գետն կ'անցնին , կը դառնան ՚ի Քանդահար (Kandahar), հարկանեն և կը քանդին, Համոն լճին եղերքն կը թափառին, գաղթեն վերսախին Համատանի (Իրաք-Անեմի) վրայէն ՚ի Խորասան . և աստի (ՅԱրեւելից ըստ Ս. Գրոց) կը մանեն միսանագամ յԱրքաստական յառաջին կայքն, յարեւմուս կասպից ծովուն . մինչեւ հաստատուն բնակութեամբ կը գետեղին իրանաստանի մէջ : — Այս նախապատմական ժամանակաց հսկայական գաղութներէն մին է - որ մեկնելով Հայոց բնակլայրէ մինչեւ ՚ի Հնդիկս կը ձկափ, և խորասանի ճամբով մինչեւ Տիգրիսի հովտոներն և յԱսորիս կը խաղայ, կը գառնայ վերսախին կրկնելով իւր տատանումն, և վերջնապէս կը հաստատուի գրաւած հողոյն վրայ , զոր Որմիզդ « ասհմանած » էր իւր « սիրելի հօտին » և « հաստարիմ գաւակաց » :

(1) (Կասպ բառին և անուան ծագութն կը հետևեցունեն ոմանք ՚ի Հնախօսից Հայրանեան լուս բառէն : Հայոց-Արեաց սեպհական աշխարհի խրոխտ երիվարքըն՝ որոց անտաշառ գովիստն՝ Ս. Գիրք անգամ շեն մոռանար ընծայել, պատճառ կը կարծուի Կասպական ծովուն և շրջակայից և նոցին բնակչաց անուանակոչութեան . Այս ծիարուտ աշխարհի ծիալարիկ քաջազունքն հաղորդ են « Դրախտանման Երանականէն » մեկնող գաղթականութեան, որ այդ Ժ. կայից վրայ ծածանելով, կասպից հարաւէն, ըստ Anquetil du Perronի, վերջին կայքն կը հաստատեն յԻրանաստան): —

Շարայարելի